# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 1(15/16)

## Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտ. խորհրդի 17.09.15 թ.կայացած նիստի

Խորհրդի նիստին մասնակցում էին նրա 25 անդամներից 21 -ը :

Օրակարգ՝

1. Շնորհավորանքներ կիսահաղորդչային ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Վ. Մ. Հարությունյանի 75 ամյակի կապակցությամբ:
2. Ֆակուլտետի գիտ. խորհրդի 2015/2016 ուս.տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկումը և հաստատումը:

   ***Զեկ.՝ Վ.Ռ. Թադևոսյան***
3. Տեղեկատվություն 2015/2016 ուս.տարում ֆակուլտետի բակալավրիատի ու մագիստրատուրայի համալրման մասին:

   ***Զեկ.՝պրոֆ., Յու.Լ. Վարդանյան***
4. Սույն թվականին առկա համակարգով ասպիրանտուրա ընդունվածների ատենախոսու-թյունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատումը:

   ***Զեկ.՝ ամբ. վարիչներ***
5. 2015/16 ուս.տարվա 1-ին կիսամյակի ֆակուլտետի անվանական կրթաթոշակների թեկնածությունների հարցը:

   ***Զեկ.՝պրոֆ., Յու.Լ. Վարդանյան***
6. ԵՊՀ գիտ. խորհրդում ֆակուլտետի թեկնածուի ընտրություն
7. Ընթացիկ հարցեր:

*Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ..*

***Լսեցին-*** Շնորհավորանքներ կիսահաղորդչային ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Վ. Մ. Յարությունյանի 75 ամյակի կապակցությամբ:

***Արտատայտվեցին.-*** Արտահայտվեցին ֆակուլտետի դեկան, պրոֆ. Յու.Լ.Վարդանյանը, պրոֆ. Գ.Յաջյանը և Կ.Մովսիսյանը, կիսահաղորդչային ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի պրոֆեսոր Ֆ. Գասպարյանը:

*Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ..*

***Լսեցին-*** Ֆակուլտետի գիտ. խորհրդի 2015/2016 ուս.տարվա 1-ին կիսամյակի աշխատանքային պլանի քննարկումը և հաստատումը:

***Արտատայտվեցին.-*** Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ֆակուլտետի դեկան, պրոֆ. Յու.Լ.Վարդանյանը, պրոֆ. Գ.Հաջյանը և դոցենտ Կ.Մովսիսյանը:

***Որոշեցին.-*** Նախագծում հաշվի առնել կատարված առաջարկները և հաստատել աշխատանքային պլանը:

*Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ..*

***Լսեցին-*** Ֆակուլտետի դեկան պրոֆ. Յու.Լ.Վարդանյանի տեղեկատվությունը 2015/2016 ուս.տարում ֆակուլտետի համալրման մասին: Զեկուցողը թվային տվյալներ բերեց ինչպես բակալավրիատի, այնպես էլ մագիստրատուրայի ընդունելությունների վերաբերյալ: Նշվեց, որ չնայած թափուր տեղեր չունենք, սակայն պետք է աշխատել ուսումնական ծրագրերի արդիականացման ուղղությամբ:

***Արտատայտվեցին.-*** պրոֆ. Խ. Ներկարարյանը, Յու.Ավետիսյանը, Գ. Հաջյանը:

***Որոշեցին.-*** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

*Օրակարգի 4-րդ հարցի կապակցությամբ..*

***Լսեցին-*** -Ա. 04.03-“Ռադիոֆիզիկա” մասնագիտությամբ, ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ ***Վարդան Արայի Բաղմանյանի*** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

***Որոշեցին-*** 1) Ասպիրանտ **Վարդան Բաղմանյանի** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ ***« Աստղաֆիզիկական աղբյուրների բարձր էներգիաների γ ճառագայթման մեխանիզմների ուսումնասիրությունը»:***

2) Ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել ՙՙԱլիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի՚՚ ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ֆ.մ.գ.դ. **Յու.Լ. Վարդանյանին**:

*Լսեցին-* - Ե.27.01 "Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա" մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ ***Արամ Վահանի Ավետիսյանի*** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

*Որոշեցին-* 1) ասպիրանտ ***Ավետիսյան Արամի*** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ "**Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցների մշակում**":

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել, Սինոփսիս Արմենիա ՓԲԸ ուսումնական դեպարտամենտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր **Վ.Շ. Մելիքյանին**:

*Լսեցին-* - Ե.27.01 " Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա " մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ ***Տիգրան Արայիկի Հախվերդյանի*** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

*Որոշեցին-* 1) ասպիրանտ ***Հախվերդյան Տիգրանի*** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ "**Թվային ինտեգրալ սխեմաների էներգասպառման նվազեցմանը կողմնորոշված ֆիզիկական նախագծման միջոցների մշակումը**":

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել, Սինոփսիս Արմենիա ՓԲԸ ուսումնական դեպարտամենտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, տ.գ.դ., պրոֆեսոր **Վ.Շ. Մելիքյանին**:

*Լսեցին-* - «Ա 04.10 – կիսահաղորդիչների ֆիզիկա» մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի 1-ին տարվա ասպիրանտ **Տիգրան Անդրանիկի Զալինյանի** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

*Որոշեցին-* 1) ասպիրանտ **Տիգրան Զալինյանի** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «**Էլեկտրոնի շարժունակության աղմուկները էլեկտրոն- ֆոնոն թունելային ցրումներով և տատանվող խառնուրդային ատոմներով կիսահաղորդիչներում**»:

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել "կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա" ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.դ. Ս.Վ. Մելքոնյանին:

## *Օրակարգի 5-րդ հարցի կապակցությամբ..*

*Լսեցին-* ֆակուլտետի 2015/16 ուստարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակների թեկնածությունների առաջադրման հարցը:

*Արտահայտվեցին-* ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Յու.Լ. Վարդանյանը, ԱՊՏՖ ամբիոնի վարիչ, դոցենտ Գ. Ալավերդյանը, Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Մ. Հարությունյանը, ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի պրոֆ., Խ.Ներկարարյանը:

*Որոշեցին-* Հաշվի առնելով ուսման գերազանց առաջադիմությունը և գիտահասարակական ակտիվությունը անվանական կրթաթոշակների թափուր տեղերը հատկացնել հետևյալ մագիստրոսներին.

<u>Էմիլ Միրզաբեկյանի անվան</u>

1. **Եզեկյան Թորգոմ Սամվելի** – մագիստրատուրայի 2-րդ կուրս

<u>Ալիխանյան եղբայրների անվան</u>

2. **Գասպարյան Սարգիս Արմենի** - մագիստրատուրայի 2-րդ կուրս

<u>Յուրի Բախշյանի անվան</u>

3. **Շահիսաթունի Գևորգ Հարությունի** - մագիստրատուրայի 2-րդ կուրս

<u>Յակոբ Զարոբյանի անվան</u>

4. **Սարգսյան Սարգիս Թաղևոսի** - մագիստրատուրայի 2-րդ կուրս

*Օրակարգի 6-րդ հարցի կապակցությամբ..*

***Լսեցին-*** ԵՊՀ գիտ. խորհրդում ֆակուլտետի ներկայացուցչի ընտրությունների հարցը:

***Արտատայտվեցին.-*** Ֆակուլտետի դեկան, պրոֆ. Յու.Լ. Վարդանյանը առաջարկեց “Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա” ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Վլադիմիր Միքայելի Հարությունյանի** թեկնածությունը: Բաց քվեարկության միջոցով առաջարկն ընդունվեց միաձայն:

***Որոշեցին.-*** Համալսարանի գիտական խորհրդի ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ներկայացուցիչ առաջադնել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Մ. Հարությունյանին:

***Խորհրդի նախագահ,***
***ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր*** ***Յու.Լ.Վարդանյան***

***Գիտքարտուղար*** ***Վ.Ռ. Թադևոսյան***